ԱՐԱՐԱՏՈՒՄ ԲԱՑՎԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

16.10.2014 13:28



Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի և Արարատի մարզպետարանի միջև այսօր՝ 2014թ. հոկտեմբերի 16-ին, ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր:

Արարատի մարզում գործելու է ՀՀ փաստաբանների պալատի Արարատի մարզային համակարգողի գրասենյակը: Բացման արարողությանը մասնակցել են ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը, Արարատի մարզպետ Ռուբիկ Աբրահամյանը, ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրեն Սիմոն Բաբայանը, մարզային խնդիրների համակարգման գծով ՓՊ նախագահի տեղակալ Մելանյա Առուստամյանը, փաստաբաններ և մարզպետարանի աշխատակիցներ:

Արարատի մարզի գրասենյակ չունեցող փաստաբաններին Մարզպետարանը տրամադրել էր գրասենյակ, որը ՀՀ փաստաբանների պալատն իր միջոցներով կահավորել էր և ապահովել գույքով ու տեխնիկայով:

Փոխըմբռնման հուշագրի ստորագրումից հետո Արա Զոհրաբյանը և Ռուբիկ Աբրահամյանը մասնակցել են գրասենյակի բացման արարողությանը:

Փաստաբաններն այսուհետ Արարատի մարզում ամսական առնվազն մեկ անգամ անվճար իրավաբանական խորհրդատվություն են տրամադրելու մարզի բնակիչներին:

Երկու կառույցների ղեկավարներն էլ ողջունել են այս նախաձեռնությունը: Ռուբիկ Աբրահամյանն իր գոհունակությունն է հայտնել մեկնարկող այս ծրագրի առթիվ և հայտնել. ‘Վստահ եմ, որ Փաստաբանների պալատը կաջակցի մեր ազգաբնակչության իրավագիտակցության և իրավական մշակույթի զարգացման բարձրացմանը’:

Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը խոսելով Պալատի մարզային քաղաքականության մասին՝ նշել է. ‘Բոլորն էլ լավ գիտեն, որ մեծ մասամբ իրավական անցուդարձը կենտրոնացած է Երևան քաղաքում: Այս նախաձեռնությամբ փորձում ենք մեղմացնել մարզերում գործող փաստաբանների աշխատանքային խնդիրները’:

Ապագայում ՀՀ փաստաբանների պալատը նախատեսում է նաև հեռավար ուսուցում կազմակերպել մարզերի փաստաբանների համար:

Փաստաբանների վերապատրաստումը իրականացնելու է ՀՀ փաստաբանական դպրոցը: Խոսելով վերապատրաստման կարևորության մասին՝ ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրեն Սիմոն Բաբայանը նշել է. ‘Ինչպես հայտնի է, յուրաքանչյուր փաստաբան պետք է վերապատրաստվի 24 ժամ և այս

առումով խնդիր էր առաջանում մարզերի փաստաբանների համար Երևան գալը: Մոտ ապագայում վերապատրաստումները կիրականացնենք հեռավար ուսուցմամբ’:
Հիշեցնենք, որ ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը 2014թ. հունվարի 23-ին, հանդիպել էր Արարատի նախկին մարզպետ Արամայիս Գրիգորյանին և երկուստեղ ձեռք էր բերվել պայմանավորվածություն՝ համագործակցության այս ձևաչափի մասին:
Արարատի մարզում գործում է ընդհանուր 19 փաստաբան, այդ թվում՝ Արտաշատ քաղաքում 9 փաստաբան, Արարատ քաղաքում 3 փաստաբան, Վեդի քաղաքում 4 փաստաբան և Մասիս քաղաքում 3 փաստաբան:





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })